ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՎԵՐԱՀՍԿԻՉ - ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

22.11.2025 թ.

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի 2025 թվականի նոյեմբերի 16-ի համամասնական ընտրակարգով անցկացվող ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման արդյունքների

Տեղական ինքնակառավարման մարմինների 2025թ. Նոյեմբերի 16-ի ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցությունները և կուսակցությունների դաշինքը «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ Ընտրական օրենսգիրք) սահմանված կարգով և ժամկետներում բացել են նախընտրական հիմնադրամներ և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացրել նախընտրական հիմնադրամներում կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ երրորդ հայտարարագրերը, ինչպես նաև կատարված վճարումները հավաստող փաստաթղթերը և կնքված պայմանագրերը:

ՀՀ ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն նախընտրական քարոզչության ժամանակահատվածում առևտրային բանկերից 3 աշխատանքային օրը մեկ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-

վերստուգիչ ծառայություն (այսուհետ՝ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն) ստացվել են տեղեկանքներ ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի նախընտրական հիմնադրամներում կատարված մուտքերի և ելքերի վերաբերյալ, որոնց հիման վրա Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կողմից կազմվել են ամփոփ տեղեկանքներ և տեղադրվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում: Տեղեկանքները իրենց մեջ ներառել են տեղեկություններ կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի նախընտրական հիմնադրամներում կատարված մուծումների և ելքերի չափերի, դրանց ժամանակագրության, ինչպես նաև հիմնադրամների մնացորդների վերաբերյալ:

ՀՀ Ընտրական օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն բոլոր կուսակցությունները և կուսակցությունների դաշինքը, ընտրությունների արդյունքների ամփոփման համար՝ սույն օրենսգրքով սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ, Վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն են ներկայացրել իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը, ինչպես նաև կատարված վճարումները հավաստող փաստաթղթերը և պայմանագրերը: Հայտարարագրերը իրենց մեջ տեղեկություններ են ներառել նախընտրական հիմնադրամ կատարված մուծումների և դրանց ժամանակագրության, մուծումներ կատարած կուսակցությունների մասին տվյալների, ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասով նկարագրված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման ծախսերի, դրանց ժամանակագրության, ձեռքբերման ծախսերը հավաստող փաստաթղթերի, դեռ չվճարված պարտավորությունների չափերի մասին: Հայտարարագրերը ներկայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, տեղադրվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը նախընտրական հիմնադրամներում մուծումների և ծախսերի վերահսկողությունը իրականացրել է՝

- Բանկերից ստացված տեղեկանքների
- Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի կողմից ներկայացված հայտարարագրերի
- Հիմնադրամից կատարված ծախսերը հավաստող փաստաթղթերի և կնքված պայմանագրերի
- Ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստացված տեղեկությունների ուսումնասիրության հիման վրա:

ՀՀ Ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

1. «Հայրենիք» կուսակցության նախընտրական հիմնադրամին երկու ֆիզիկական անձանց կողմից մուծվել է 1.000.000 ՀՀ դրամ: Մուծված գումարները վերադարձվել են տվյալ գումարը մուծած անձանց:

2. «Ժառանգություն» կուսակցության նախընտրական հիմնադրամին մեկ ֆիզիկական անձի կողմից մուծվել է 500.000 ՀՀ դրամ: Մուծված գումարը վերադարձվել է տվյալ գումարը մուծած անձին:

ՀՀ Ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն կուսակցությանների դիմումների հիման վրա Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ թույլատրվել է՝

1. «Մայր Հայաստան» Ազգային-դեմոկրատական կուսակցությանը համալրել նախընտրական հիմնադրամը 2.877.954 ՀՀ դրամի չափով գումար, նաև մարել 3.149.124 ՀՀ դրամի չափով պարտավորությունները:

2. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ թույլատրվել է մարել 150.000 ՀՀ դրամի և 996.85 դոլարին համարժեք ՀՀ դրամի պարտավորությունները:

3. . «Համահայկական Ճակատ» կուսակցությանը՝ թույլատրվել է մարել 200.138 ՀՀ դրամի պարտավորությունը:

Համադրելով բանկերից ստացված տեղեկանքները կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի կողմից ստացված հայտարարագրերի, ինչպես նաև

կատարված վճարումները հավաստող փաստաթղթերի և կնքված պայմանագրերի հետ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը ***փ ա ս տ ու մ է***, որ.

Բոլոր սուբյեկտների կողմից ներկայացված՝ նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերում խախտումներ չեն հայտնաբերվել և դրանք համապատասխանում են ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կանոնակարգումներին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի
Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ղեկավար՝ Տ. ԲԱԲԻԿՅԱՆ